ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՋՈՐԱՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՍՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՋՕՐԱՅԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյններն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն բերած Ձեր բարի եւ մեծարժէք ծառայութիւնների համար, որոնց մասին տեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Ցովսէփեանից:

Մեծարգոյ պրն Ջօրայեան,

Բազում փարիներ, զօրացած Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ, Դուք, որպէս բարեպաշտ հայորդի, Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դնում Մայր Եկեղեցու սրբազան առաքելութեան իրականացմանը՝ հաւատարիմ Տիրոջ խօսքին՝ «Երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ եւ պահիցեն» (Ղուկ. ԺԱ 28): Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր վարչական ծառայութիւնները եւ կատարած մեծագումար նուիրատուութիւնները բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ եւ վարձք ամբարում երկնքում:

Գովելի է Ձեր վաստակը առաւելաբար Գոսթա Մեսայի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու պայծառութեան եւ ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի առաջնորդանիստ Մայր եկեղեցու կառուցման նուիրական գործում: Մենք գոհութիւն ու փառք ենք մատուցում Բարձրեալին, որ Միացեալ Նահանգներում հայորդիները ապրում են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հայրենեաց աւանդներին հաւատարիմ կեանքով՝ միշտ դրսեւորելով հայրենական կեանքի շինութեանը մասնակցութիւն բերելու պատրաստակամութիւնը:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով, ընդառաջ բարեջան Ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ միշտ եռանդուն ու կորովաշատ, շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին եւ յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեր բոլոր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Մայիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 160